

հրացաններին վրան շտկեցին. «Վախստա-
կան զինուոր, բռնեցէք փախստական
զինուորը, կանչելով: Սկանի զգեստնե-
րը գնտակներէն ծակ ծակ եղան: Ս եր-
ջապէս քաջաբար պատերազմեւին և
բոլոր վառօղը հատցրնեւին ետքը գեղը
հասաւ, ընկերներէն մէկուն կեանքը
ազատելու և բոլոր գնդին օգտակար ըլ-
լալու պարծանքով:

(Վէպէտ այս պարագայիս մէջ այս
կերպով վարուելովը ամենուն սիրտը
չի կրցաւ շահիլ, բայց գէթ բարեկամ
մը վաստակեցաւ. ազատած երիտասար-
դը զանիկայ իրեն հաս- ըրաւ, որ սըր-
բազան անուն մըն է, որուն ամենեւին
չեն գրգռեր Վովկասու լեռնցիները, և եր-
գումն ըրաւ ամենուն դէմ զինքը պաշտ-
պանելու: Բայց այս կապակցութիւնը
միայն բաւական չէր զինքը գեղին բը-
նակչաց գլխաւորներուն ատելութենէն
ազատելու: } ուցած քաջութիւնը և
տիրոջը վրայ ունեցած հարումը ա-
նոնց վախը կ'աւելցնէր: Ընկէ ետեւ ալ
զինքը անգործունեայ խեղկատակի մը
տեղ չէին դնէր, ինչպէս ինչուան այն
ատեն, և երբոր մտքերնին կը բերէին
իրենց անյաջող ասպատակութիւնը, ու-
րուն մասնակից էր նաև Սկան, կը զար-
մանային թէ ինչպէս Սուսաց գնդերը
իրենց սովորական կայանէն այնչափ հե-
ռու տեղ ճիշդ նոյն միջոցին գտնուե-
ցան, և կասկածեցան որ Սկան միջո-
ցով մը անոնց իմացուցած ըլլայ: Սր-
չափ որ ալ այս կարծիքը անտեղի էր,
բայց անկէ ետեւ աւելի զգուշութեամբ
վրան կը հսկէին. ծերունի Սպրահիմն
իսկ վախճալով որ իր բանտարկեալները
փախչելու դաւակցութիւն չընեն, չէր
ձգէր որ երկայն ատեն խօսակցութիւն
ընեն, և բարի ծառային ալ սպառնա-
լիքներ կ'ընէր, և երբեմն կը ծեծէր ալ,
երբ իր տիրոջը հետ խօսիլ կ'ուզէր:

Կը շարունակուի:

ԳՍԱՎԻԷ ՏԸ ՄԷՍԴԻՐԸ

Ասորեստանէայց վաճառականու-
թիւնն ու արուեստը:

Բաբելոն բնական աշխարհագրական
դրբովը յաջող վաճառականութիւն ու-
նենալու ենթակայ էր: Ս երին և ստո-
րին Բսիոյ միութեան կէտին վրայ զբա-
նուելով, երկու մեծ գետերու մօտ, ու-
րովք հաղորդակցութիւն կ'ունենար
Պարսկային ծոցին և հնդկաց ծովուն
հետ, ի վաղուց հետէ պէտք էր որ ըշ-
տեմարան ըլլար արեւելքի և արեւմուտ-
քի կարաւաններու, և միանգամայն ժո-
ղովարան Բիրիկէի, Բրաբիոյ և հնդ-
կաստանի քաղաքներէն եկող նաւոր-
դաց. և արդարեւ ամենայնիւ հաւաստի
է որ Պարսկային ծոցը հնուց ի վեր
արեւելքի վաճառականութեան գլխա-
ւոր ճամբան եղաւ:

Բաբելոն Բսիոյ այլ և այլ կողմե-
րուն բերքերը կ'առնուր և փոխադարձ
իրեն յատուկ ճարտարութեան բանե-
րէն կը ծախէր անոնց. ունեցած ան-
բաւ ձեռագործներուն մէջ գլխաւոր-
ներն էին ասր և կտաւ. զգեստեղէնք
և օթոցք ալ ոչ ուրեք այնպէս ճար-
տարագործ և կենդանի գունովք կը շի-
նուէին, ինչպէս ի Բաբելոնստան. բայց
չէ թէ միայն ի Բաբելոն կը գտնուէին
իր այս հռչակեալ ձեռագործները՝ այլ
նաև Բաբելոնի ամենայն ուրիշ քա-
ղաքներու և աւաններու մէջ: Բստ
Վիոգորի սիկիլիացւոյ՝ Շամիրամ Բ-
փրատու և Տիգրիսի գետափանց վրայ
բազմաթիւ շտեմարաններ կառուցած
էր, որոնց վախճանն էր իր երկրին և
մերձակայ ազգաց բերքերն համա-
բել: Սորաբոնի ժամանակ կտաւի ձե-
ռագործներու մէջ առաջին երեւելի քա-
ղաքն էր Պորսիբա, որ 10 բիւրամէդը
վար է քան զԲաբելոն:

Բաբելացիք բաց ի հանդերձեղի-
նաց և օթոցաց նաև ճարտարարուեստ
ու ինամքով շինուած շատ մ'ալ շուայ-
լութեան բաներ ունէին. զոր օրինակ՝
գեղեցիկ քանդակեալ զէնքեր, կահ-
կարասիք, պճինք, բժժանք, քանդա-

կեալ քարեր՝ որք և բաբելացի գլանք ալ կը կոչուին, և որոց զանազան նշանակութիւնները անշուշտ վերջապէս սլիտի յայտնեն կատարելապէս իրենց հին քաղաքականութիւնը:

Այս բաներուս փոխանակ Ղաբելոն Րիոյ այլ և այլ կողմերէն մեծ մայրաքաղաքի մը պիտոյիցն և շոյալութեանց կարեւոր բերքեր կ'ընդունէր: Հայաստան իրեն գինիները կը խաւրէր Ափրատու վրայէն, որուն նաւորդութիւնը հետաքրքրական ոճով ստորագրած է Արոգոտոս: Հնդկաստանէն ալ կունք և մեծամեծ շուներ կ'առնէր, ուրոնք այնպէս ախորժելի էին Ղաբելացւոց և Պարսից, մինչ զի Վրիդանդէմիս՝ Ղաբելոնի նախարարը, չորս քաղաք կամ աւան որոշած էր այս շները խնամելու համար, և փոխարէն ամէն ուրիշ հարկերէ ազատ ըրած էր այս քաղաքներս: Վարձեալ Հնդկաստանէն՝ ինչպէս նաև Պարսկաստանէն, մեծագին ասուեայ դիպակներ կու գային իրեն: Արաբիայէն և Աթովպիայէն ալ կ'առնուր ինկեղէն, համեմք, ոսկի, փղոսկր և եբենոս:

Ղաբելոն հաղորդակցութիւն ունէր այլ և այլ տէրութեանց հետ, որ իրենց բերքերը կը բերէին շատ մը մեծամեծ ճամբաներով, որոնց միութեան կէտն էրինքը: Այս ճամբաներէն մէկը կը սկըսէր Շօլէն, կը բարձրանար ի հիւսիսային կողմ դէպ ի Հայաստան, որուն հարաւային մասին մէջէն անցնելով, կը կարէր Ափրատը, կը պատէր զԱրիւրիկիա և կիւրիկեան կիրճէն անցնելով կը մտնէր ի Վապադադովկիա, ուստի նաև կը յառաջէր ի Փռիւգիա և կը լմնար Արգիոյ Սարգ քաղքին առջև: Աղոր այս ուղւոյս վրայ՝ որուն մեծագոյն մասը կտրած անցած էր Արոգոտ՝ արքունական պալատներ կային, կ'ըսէինքը, որոնք ճանապարհորդաց իրենց ամենայն աղիւիքը մէջերնին օթւանելու կը ծառայէին և իբրև հիմակուան կարաւանատուններն էին: Շօլէն ինչուան Սարգ, կ'աւելցնէ յոյն պատմագիրը, 1100 կայանք կը համրուէր:

Այս ճամբան դեռ նոյնն է ցայսօր Օմիւռէն Սպարհան գացող կարաւաններու համար:

Ափրատը բնական ճամբայ մ'էր, վաճառականութեան համար որ կ'ընէր Ղաբելոն Հայաստանի և Արիւրիկեան աշխարհաց հետ: Աճառուց փոխադրութեան համար ծառայող նաւակներն՝ ըստ Արոգոտոսի, կաշիէ շինուած էին կլորաձև, որոնք գետոյն ընթացքին կը թողուին. և երբ Ղաբելոն կը հասնէին և մէջի վաճառքները կը ծախէին, կաշիները կը ծալէին և հետերնին առնելով ցամաքի ճամբով ետ կը դառնային:

Վետով նաւարկութե՛ դիւրութեան համար մեծամեծ աշխատութիւններու ձեռք զարկին. ջուրերը ամփոփելու համար և որպէս զի երկրին ներսերը չողողէն՝ մեծամեծ թումբեր կառուցին: Ղաբելոնի մէջ ամենայն կողմ առուակ առուակ ջրանցքներ կը ջրոտէին երկիրը, և ամենուրեք արգասաւորութիւն կը պատճառէին, կամ Սիջագետքի այլ և այլ կողմանքն իրարու հետ կը հաղորդէին: Այս ջրանցքներէն ոմանք, և մանաւանդ արքունական ջրանցքը կամ Նահար-ճալա կոչուածը այնպէս լայն և խոր էր որ վաճառականութեան նաւեր ալ կրնային անցնիլ մէջերնէն: Այս բազմաթիւ ջրանցքներով գետոյն հասանքը դանդաղեցաւ և բուռն թափը կտրեցաւ: Այս ջրանցքներ բանալու գրութիւնը ուրիշ վախճան մ'ալ ունէր, այսինքն երկիրը մերձակայ ազգաց արշաւանքներէն կը պաշտպանէր:

Այսինքն կ'ըլխաւոր Ղաբելացւոց վաճառականութեան համար ունեցած ցամաքային ճամբաները. բայց տէրութեան մայրաքաղաքը ունէր իրեն յաջողութեանը ժամանակ զօրաւոր նաւատորմիլ մը. իրեն նաւերը Պարսից ծոցէն կ'երթային հարաւային կողմի, այսինքն Արաբիոյ և Հնդկաստանի մեծագին համբարներն բերելու: Աթէ Ստրաբոնի հաւատանք վաճառականութեան տուներ և գաղթականներ ունէին այն կողմերը. և լեբրա՝ աշխարհ-

քիս ամենաճոխ շտեմարաններէն մէկը՝ Վաղղէացւոց գաղթականութիւն մ'էր, ըստ երեւելի աշխարհագրին։ Այնչ պակաս նաև Պարսկային ծոցին առատ և ճոխ մարգարիտներն և Վելոս կղզւոյն բեղնաւորութիւնը իրենց կը քաշէին Ղաթելացիքը։ այս կղզիէն կը բերէին այն թէթև եղէգները որ շատ մեծ յարգ ունէին բովանդակ Ղսորեստանի մէջ։ Բնուշտ է ուրեմն հիմա թէ Ղաթելացի նաւորդներ Ղաթիա և Հնդկաստան կ'երթային, թերևս ինչուան Սէյլան, այլ և այլ տեղեաց համբարքներն բերելու համար։ Բայց ինչ հետեանք ունեցաւ ամենասփիւռ վաճառականութեան հաղորդակցութիւնն Ղաթելացւոց բարուց և կրթութեանը վրայ։ Վիւրին է ըմբռնել ինչ ապականութիւն որ կրնար պատճառել այն մեծ քաղաքին մէջ՝ տուրևառութեան ոգին կլիմային ազդեցութեանն հետ, և այնպիսի ազատ կրօնքի մը հետ լծորդեալ՝ որ բնութեան ամենայն բնածին ազդմունքն կ'աստուածայնէր։ Բայսպէս ահա ի մէջ պարուցն և խրախուսեանց իր վերջին օրը վրայ հասաւ։

Այնչ նուազ ի վաճառականութենէ և ի ճարտարութենէ զարգացեալ էին նաև արուեստք ի Ղաթելոն. և ճարտարապետութիւնն, նկարչութիւնն, ուրուագծութիւնն և քանդակագործութիւնն ի ծայր կատարելագործութեան հասած էին։ Հին պատմագրացմէ յայտնի է, որոնց ըսածը կը հաստատեն նաև արգի գիւտերը, թէ Ղսորեստանեայց հանձարն ի խնուէ և ի Ղաթելոն հոյակապ շէնքեր կառոյց, զորս շուայութեամբ զարդարած էր արձաններով, քանդակներով, նկարներով և ամենայն ազգի ձեւագծութեամբ։ Ղաթելոն գրեթէ ամբողջապէս իրեն փրստակացը ապի թաղուած է, և իրեն բազմադիմի քաղաքականութիւնն միայն պատմագրաց ըսածներէն պէտք է հասկընանք։ Բայց ահա յանկարծ իր հին նախանձորդն և թշնամին խնուէ, որ գողցես այնչափ դարերէ վերջը և ոչ հետք մը պա-

հած կը կարծուէր իր էութենէն, կը յայտնուի աչքերնուս առջև իրեն պայծառութեանը ժամանակիքանի մը յիշատակարաններովը։ Երևեցաւ ուրեմն արդ իր արուեստիւքը, լեզուաւը, բարուքն, համառօտ ըսել՝ քաղաքականութեամբը. և կրնանք յուսալ որ անթիւ սեպած և արձանագրութեանց թարգմանութիւններէն՝ որովք ծածկուած են իր աւերակները, պիտի կարենայ ուսմունքը քիչ ատենէն Ղսորեստանեայց պատմութեան խորհրդաւոր խորութիւնը չափել։

Յայտնի է ամէնուն թէ Սորսապատ անունով փոքրիկ աղքատին գեղի մը կայանին վրայ եղաւ նախ Վաղղիոց հիւպատին ձեռքովը՝ խնուէի հին պալատի մը գիւտը։ Նոյնը պատճառ եղաւ դեռ ուրիշներ ալ գտնելու, և արուեստ մը ի լոյս ելաւ, որուն էութիւնը ոչ ոք գիտէր՝ թող թէ մեծութիւնը։ Եւ վրի թանգարանին մէջ դրուած ասոնց հրաշալի կտորուանքներէն յայտնի է թէ նինուէացի արուեստաւորք արժանաւոր նախորդքն եղած են յոյն արուեստաւորաց։ Վանդակագործութեան մէջ գլուխները հանգարտ և պայծառ վսեմութիւն մ'ունին, Եգիպտոսիներէն շատ աւելի գերազանց. զարմանալի է մասնաւորապէս անասնոց կերպարանաց վրայ երևցած կատարելագործութիւնն։ Եւ գիտցուի նաև հիմա թէ երբ կանգնուեր են այս շէնքերը, վասն զի արձանագրութիւններէն իմացուեցաւ թէ իրենց հիմնարկութիւնը՝ խնուէի պատմութեան երկրորդ շրջանէն պէտք է սեպել, Ղսորեստանեայց երկրորդ պետութեան միջոց։ Բայս պալատներուն կառուցանողքն եղան Սարկունք, Ենեքերիմք և Սարգանապալք. այս հսկայած շինութեանց համար գործածեցին այն անբաւ միջոցները որ մեծամեծ աշխարհակալութիւններով ձեռք ձգած էին, և միանգամայն խնուէ բերուած անթիւ գերիներն։

Բնդհանրապէս Ղսորեստանեայց սովորութիւն ունէին մեծամեծ բարձրա-

ւանդակներ կամ արուեստական բլուրներ ամբառնալու որ իրենց շինած տաճարացն, պալատանց և քաղաքաց բարձրայատակ (plate-forme) էին: Յայտնի է թէ Շամիրամ շատ այսպիսի բլուրներ կանգնեց: Աինուէ գրեթէ ամբողջ արուեստական բարձրութեանց վրայ շինուած էր, որ անհուն գծով կը տարածուէին. պարիսպներուն շրջապատն էր 480 ասպարէզ (stadès), ըստ Ատեսիասայ՝ որ իբրև ականատես կը վկայէ. արտաքուստ՝ արևով թրծեալ աղիւսներով շինեալ էր. իսկ ներսը՝ ի հողոյ, որով յայտնի կ'ըլլայ թէ ինչպէս այս աղիւսէ պատուարին իյնալէն վերջը՝ հողոյ զանգուածը որ աղէկ խմորեալ չէր՝ փլաւ և երկրին հասարակ հողոյն հետ խառնուեցաւ: Այս լայնատարած շրջափակը քառակուսի մը կը ձևացներ, որ կ'երևայ դեռ ևս դաշտին տեղ տեղ ունեցած բարձրաւանդակի ձևոյն վրայ:

Իսկ գալով Այորսապատու մէջ գրտնուած պալատին, չորս որիշ որիշ մեծամեծ շէնքերէ կը ձևանայ, որոնք ամէնքը մէկէն՝ մէկ արքունի բնակարան մը կը ձևացնեն, հասարակ յատակի մը վրայ բարձրացած՝ ուղղանկիւնի ձևով: Բազմաթիւ մեծ ու պզտիկ դահլիճներն ալ, որոնց հետքը կ'երևայ ներսը, նոյն ձևն ունին, որ թուի թէ Մորեստանեայց ճարտարապետութեան էական ոճերէն մէկն է: Ինք մէջ շինից և բլրակին արտաքին եզերաց վրայ եղած ընդարձակ սրահներուն կամ ճեմելիքներուն յատակը՝ կրակով թրծեալ աղիւսներէ է, որոնց վրայ սեպած և արձանագրութիւնք կան: Այս սրահակներուն վրայ բացուած դռները, ուստի շէնքին զխաւոր մասերը կ'երթըցուի՝ զարդարեալ են վիթխարի արձաններով, որոնք մարդագլուխ թեւաւորեալ ցուլեր կը ներկայացնեն. այս խորհրդաւոր կենդանեաց երեսը դէպ ի դուրս է, և մարմիննին դրան պատեալուն մէջ ագուցուած: Ելուց համեմատութիւնը՝ որ միշտ վիթխարի է, կը փոխուի ըստ դրան լայնութեանն և մեծութեան, 4-5 մէտրի չափ: Այս

պէս զարդարուն տասը դրունք գտնուեցան իրենց քիչ կամ շատ փնտաւ քանդակներովը. կողմնակի առիւծներ զետեղեալ էին՝ բայց միշտ ուղղանկիւնի վերջին ծայրերը:

Այորսապատի գիւտերուն մէջ ամենէն աւելի հետաքրքրական բանն է քանդակագործութիւնը. պալատին արտաքին ճակատները և դահլիճներուն որմունքը զարդարուած են քարի վրայ անհաւատալի շուայութեամբ և ամենամեծ ճարտարութեամբ փորագրեալ նկարներով: Այս նկարները կը ներկայացնեն Աինուէացւոց ընկերական կեանքը բազմադիմի կերպերով: Արծնական արարողութիւնները, ընտանեկան սովորութիւնները, թագաւորաց աշխարհակալութիւնները, պարտութիւնքը, յաղթելոց տրուած տանջանքները, վերջապէս ամենայն ինչ յորում կը կայանար հին ատեն մեծ ժողովրդեան մը էութիւնը, յայտնի կ'երևայ այս որմերուն վրայ հրաշալի քանդակներով: Հոս մէկ կողմը կը տեսնենք աստուածներ և քուրմեր, որոնք իրենց ի պաշտօն նուիրեալ աստուծոյն խորհրդական նշանները վրանին կը կրեն. անդին քիչ մը հեռուն երկայն թափօր մը և բազմութիւն մարդկանց, որ թագաւորը քառաձի լծեալ կառքի մը մէջ կը հրամցնեն. գեղեցիկ նկարներ, առիւծագլուխ անօթներ, պզտիկ քաղաքներ ոմանց մատերուն ծայրը իբր ի նշան իրենց պետութեանը ընդլծով ընկճեալ քաղաքաց: Իւրիշ կողմ մը կը տեսնենք պատերազմի տեսարաններ, յորում նախագահ նստած է թագաւորն ինքնին, և որոնց մէջ յայտնի կ'երևայ Մորեստանեայց մեծ պետութեանն ընկճեալ ազգաց կերպարանաց տիպը: Իսկ աւելի հեռուն կը տեսնենք որսորդութիւններ՝ յորսնկարեալ են զանազան տեսակէ վայրի որսոց ամենաճիշդ հաւատարմութեամբ:

Այսպէս ուրեմն կը հաւաստին Վիգոր սիկիլիացւոյն ըսածները, որ ըստ Ատեսիասայ՝ Շամիրամայ Բաբելոնը զարդարելու համար ընել տուած մե-

Ծամեծ աշխատութիւնները կը պատ-
մէ Վճտարակաց և որմնց վրայ, կ'ը-
սէ, ամենայն ազգ կենդանիք նկա-
րուած էին, ամենաբնական ըստ գունոց
և ըստ քանդակաց: Վար հոն այլ և այլ
կենդանեաց որս մը, որոնք չորս կան-
գունէ աւելի բարձրութիւն ունէին.
այս որսոյն մէջ Շամիրամ ձիու վրայ
էր նետովը յովազ մը զարնելու վիճա-
կի մէջ. մօտն էր փեսան Վինոս, որ
տիգոֆն առիւծ մը կը զարնէր, Վյս-
պէս էն ստուգապէս խորսապատու պա-
լատին դահլիճներուն որմնց վրայ ե-
ղած քանի մը նկարները:

«Վյս աշխատութեանցս ամենուն
մէջ, կ'ըսէ ականատես վկայ մը, մեծ

պարզութիւն կ'երևայ ձեռք, լծորդեալ
միանգամայն ճոխ և մանրամասն զար-
դերով. յաճախ բնականութիւն, միշտ
բարակութիւն, վերջապէս խոյակնե-
րուն ու դրուագներուն մէջ կարգէ
դուրս յստակութիւն մը, որ երբեմն ին-
չուան ցամաքութեան կ'երթայ: Վսո-
րեստանեայց արուեստը, կը յաւելու-
նոյն ականատեսը, շատ աւելի յստակ
է քան զարուեստն հնդկային՝ որ յա-
ճախ այլանդակ և մտացածին է. նոյն-
պէս բարակ՝ բայց աւելի գիտուն ան-
դամազնական ամենայն մասանց մէջ
քան զարուեստն եգիպտական, և շատ
աւելի վերագոյն է քան զնա յուսումն
բնութեան: Վաւ երբեմն նինուէացի



Անդրի հսկայաձև 'ի խորսապատ¹:

քանդակագործին գրիչը այն աստիճան
ստորին չէ քան զՎիդիասայ գրիչը՝ որ
չկարենանք երկուքը իրարու հետ բաղ-
դատել:

Եթէ ճարտարապետութիւնն և
քանդակագործութիւնն այսպէս կա-
տարելագործեալ էին՝ ոչինչ նուազ էր

1. Վյս փորագրութիւնս Նուվի Ասորեստա-
նեայց Թանգարանին մէջ գտնուած երկու հսկա-
յաձև արձաններէն մէկուն վրայէն եղած է: Վյս
երկու արձանները խորսապատի մէջ նոր գտ-
նուած նինուէացի պալատի մը գրանց մուտքը կը
ձևացնէին:

նաև նկարչութիւնն ալ: խորսապա-
տի մէջ գտնուած քանդակներէն շա-
տին գունաւորութեանը վրայ աղէկ ա-
րուեստ կ'երևայ. և ոչ թէ միայն զօ-
րաց ղէնքերն և ձիոց կազմածքը կեն-
դանի գունովք նկարած է արուեստա-
ւորը, այլ նաև դէմքերու վրայ ալ նոյնը
կ'երևայ: Վտեսիասէն յայտնի է որ
քանդակները գունաւորելու սովորու-
թիւն կար Նաբելոնի մէջ, և գիտենք՝
ըստ վկայութեան Նորդոտոսի, թէ Վս
սորեստանեայք սովորութիւն ունէին

մաղերնին և մօրուքնին գունաւորելու :
Լիտուաժ շինելն ալ Լսորեստանեայց
արուեստին գլխաւոր տարերքներէն
մէկը կ'երևայ . ասիկա որ Վաղդէա-
ցւոց գիւտն է , Լինուէի և Լաբելնի
աւերակաց մէջ առհասարակ ամէն
տեղ կը գտնուի . նաև Լինուէացւոց և
Լաբելացւոց տեղը բռնող ազգաց մէջ
ալ նոյնը շարունակուած է , և ցայսօր
Երանի պալատներուն և մզկիթներուն
գլխաւոր զարդերէն մէկն է :

Լսորեստանեայց այս արուեստն որ
այսպէս բազմաթիւ շէնքեր կառոյց և
հոյակապ յիշատակարաններ կանգնեց,
չէր կրնար տէրութեան սահմաննե-
րուն մէջ ամփոփուիլ , այլ աշխարհա-
կալութեամբ և վաճառականութեամբ
տարածուելով մտաւ 'ի Փոքր Լսիա
յունական կղզեաց մէջ , և Եփեսոս ,
և այս կողմերու արուեստաւորաց նոր
ոճ և նոր կերպեր սորվեցուց : « Երբ
Հոյնք սկսան վերաբերութիւն ունե-
նալ Լսորեստանեայց հետ , իրենց մեր-
ձակայ եղող Փիւնիկեցւոց հետ , Պե-
ղազեանց և Հելլենաց հետ , կ'ըսէ հը-
մուտ հնագէտ մը , զեղարուեստից մէջ
ամէն բան նոր պիտի սորվէին , և շատ
բնական էր որ աւելի ճարտար և վարժ
ազգէ առնուին այս բաներուս սկզբուն-
քը » : Եւ իրացնէ յոյն արուեստա-
ւորք սկսան Լինուէի արուեստաւորաց
նմանիլ , և Հունաստանի հին շէնքե-
րուն վրայ այս նմանութեանս հետքը
կը նշմարուի : Երպասուց , պալատանց
և մեհենից քանդակներուն վրայ նկա-
րուած տեսարաններէն , նկարակերտ
անօթոց ներքին քաշուածքներէն , մե-
տաղէ բաժակներէն , զարդերու , խոր-
հրդաւոր նշաններու և կերպարանաց
ընտրութենէն յայտնի կ'երևայ արեւե-
լեան ազդեցութիւնը , և յունական ա-
րուեստին ասորեստանեայց արուեստին
հետ ունեցած ներքին միութիւնը :

Բայց ոչ միայն վաճառականու-
թեամբ Փոքր Լսիա և Հունաստան
կը տարուէին Լսորեստան շինուած
թանկագին անօթներն , այլ ըստ Ստրա-
բոնի՝ Փիւնիկեցիք որ ինչուան Սորին

կեան կղզեաց մէջ անօթներ , պուտ-
կունքներ կը ծախէին՝ Լատալոյ մէջ ալ
մուծեր էին նաև ասիական արուեստով
շինեալ անօթներ , և հիմա Եփեսոսի
մէջ գտնուած անօթներուն և Տիգրի-
սի ափանց մօտ գտնուած պղնձէ բա-
ժակներուն իրարու մէջ ունեցած զար-
մանալի նմանութենէն կը տեսնուի
յայտնապէս թէ առջինները Լսորես-
տանցւոցմէ առեր են այս արուեստիս
սկիզբը , կամ թէ Լինուէացւոց ա-
րուեստը մեծ ազդեցութիւն ըրեր է
վրանին :

Լինուէացւոց արուեստին վրայ ա-
մենայն ըսածնիսնոյնպէս պէտք է հաս-
կընալ Լաբելնի շէնքերուն վրայ ալ .
բայց Վաղդէա-Լաբելացւոց մայրա-
քաղաքը իր նախանձորդէն աւելի զբժ-
բաղդ գտնուելով փլատակացը տակ
ծածկուած է ցայսօր , որ անշուշտ է
թէ կը գերազանցէր քան զԼինուէ
շէնքերուն , պալատներուն և տաճար-
ներուն բազմութեամբն և մեծու-
թեամբը : Լինութեան ոճը նոյն է-
ղաւ , և նոյն Լսիաւորայ և Տիգրիսի ե-
զերաց վրայ գտնուած նիւթերը գոր-
ծածուեցան . նաև բաբելացի արուես-
տաւորք ալ Լինուէացւոց պէս շէնքե-
րուն վրայ սեպածև արձանագրութիւն-
ներ , պատերազմական խորհրդաւոր
նշաններ , որս կամ ուրիշ տեսարաններ
կը դրոշմէին . և ինչպէս 'ի Լինուէ'
նոյնպէս նոյն 'ի Լաբելնի այս տեսա-
րաններս քանդակմամբ և նկարով
խառն էին , որ է ըսել թէ գունաւո-
րեալ քանդակներ էին : Արջապէս՝
Լինուէի մէջ գտնուած շէնքերն կըր-
կին վախճան ունեցան . արդարացու-
ցին զԵրոդոտոս և հաւաստեցին Ս-
Երոյ ըսածները անոնց առջև , որոնք որ
չափազանցութիւն կը համարէին այն
պատմուածները , և յայտնի երեւցնե-
լով արուեստ մը իրեն ամենայն մեծու-
թեանը և վսեմութեանը մէջ իմացու-
ցին թէ ինչ աստիճան քաղաքականա-
ցեալ էին այս պետութիւնները՝ որք
ցարդ աշխարհակալութեամբ միայն մեծ
սեպուած էին :